ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

78
(2744)

քՐ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՆ ՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Ժողովրդավարության հայկական ֆորումին եւ մի քանի տարօրինակ հայտարարություններ արել: Մասնավորապես, նա զուգահեռներ է տարել ժողովրդավարության եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի էության մեջ: «Ժողովրդավարության բացակայությունը ծառայել է գործիք, որպեսզի մենք բոլորս չիմանանք ողջ ճշմարտությունը Ղարաբաղի հարցի մասին: Եվ այս է պատճառը, որ հիմա մենք Ղարաբաղի հարցի մասին ժողովրդավարության պայմաններում է, որ նոր տեղեկություններ ենք իմանում, հայտնի բառերի նոր իմաստներ եւ ենթատեքստեր ենք վերհանում, ու սա շատ կարեւոր նրբություն է», - նշել է նա: Եվ Ղարաբաղի հարցում ժողովրդավարության մակարդակի մասին խոսում է մի մարդ, որ 2008 թվականի թավշյա հեղափոխությունից հետո իշխանության գալով՝ խոստացել էր. «Որեւէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որեւէ թուղթ կստորագրեմ կամ որեւէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ եւ կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, եւ դուք կորոշեք՝մենք գնում ենք այդ տարբերակով կարգավորման, թե չենք գնում»:

Իշխանափոխությունից ուղիղ երկու տարի անց՝արդեն 2020-ի մայիսի 6-ին, Նիկոլ Փաշինյանը խրոխտ տոնայնությամբ բարձրաձայնում էր. «Թող ոչ մեկ մեզ չասի՝ «Հաա, էդ ի՞նչ եք բանակցում»: Ինչ որ պետք է, դա էլ բանակցում ենք»:

Եվ հիմա էլ նա գլուխ է գովում, թե Արցախի հարցում ժողովրդավարությունն է բացել մեր աչքերը, մինչդեռ իրականում նախկինում Իլհամ Ալիեւը բողոքում էր, որ իրեն փակ դռների հետեւում ստիպում են ճանաչել ԼՂ անկախությունը, իսկ հիմա 5 ամսից ավելի փակել է ավտոճանապարհը եւ արցախցիներին ստիպում է ադրբեջանական անձնագիր ստանալ: Ի՞նչ կապ ունի սա ժողովրդավարության հետ:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը Վահան Քերոբյանի պես իրեն ցանկանում է փորձել տարբեր ոլորտներում: Ասվածի վառ ապացույցն այն է, որ առողջապահության նախարարը գրեթե ամենուր է եւ, հատկապես, այնտեղ, որտեղ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է: Երեկ Անահիտ Ավանեսյանը վարչապետի հետ Երեւանում մասնակցում էր Ժողովրդավարության հայկական ֆորումին եւ նստած էր հենց առաջին շարքում: Իհարկե, կարեւոր ֆորում էր կազմակերպված Հայաստանում, սակայն հարց է առաջանում՝ ինչ կապ ունի առողջապահության նախարարը ժողովրդավարության հետ: Մայիսի 28-ին էլ Անահիտ Ավանեսյանը մասնակցում էր «Վարչապետի գավաթ» մրցաշարին եւ կրկին առաջին շարքում էր կանգնած: Ստացվում է՝ կամ նա էլ է գնում Վահան Քերոբյանի ճանապարհով եւ իրեն ցանկանում է փորձել տարբեր ոլորտներում, կամ էլ սա հենց Նիկոլ Փաշինյանի նախաձեռնությունն է, որ փորձում է կին պաշտոնյաներին իր հետ տանել եւ Եվրոպայի աչքերում լավ տպավորություն թողել: Ամեն դեպքում, ճիշտ կլինի, որ Անահիտ Ավանեսյանը զբաղվի իր ղեկավարած ոլորտով, որպեսզի ծանոթով բժշկությունը փոխարինվի ինստիտուցիոնալ բժշկությամբ, որտեղ աղքատները չվճարեն հարուստների փոխարեն, ինչպես այսօր է:

Վրաստանում գտնվող ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը երեկ հանդիպել է Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը դատախազությունից հետքրքրվեց՝ արդյոք հանդիպման ժամանակ Աննա Վարդապետյանը քննարկել է Հայաստան ներմուծված 1 տոննա հերոինի հարցը, եւ ինչ արդյունքներ կան: Դատախազությունից ժլատ գտնվեցին ինֆորմացիա տալու հարցում եւ հայտնեցին միայն, թե հրապարակման ենթակա տեղեկությունը պաշտոնական հաղորդագրությունում ներկայացված է: Իսկ ի՞նչ է ասված պաշտոնական հաղորդագրության մեջ. Հայաստանի եւ Վրաստանի գլխավոր դատախազների հանդիպման ընթացքում, մասնավորապես, անդրադարձ է կատարվել քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությանը եւ ընդգծվել, որ երկու երկրների դատախազությունների միջեւ բարձր մակարդակի հարաբերությունները թույլ են տալիս աշխատանքային կարգով քննարկել ծագած հարցերը եւ գտնել առկա մարտահրավերների՝ երկուստեք ընդունելի լուծումներ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել 2022 թվականին երկու երկրների դատախազությունների միջեւ կնքված համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրին, եւ քննարկվել դրա շրջանակում աշխատանքային ծրագիր մշակելու եւ ստորագրելու հնարավորությունը: Նշված ծրագիրը կներառի այնպիսի արդիական ուղղություններ, ինչպիսիք են կիբեռ եւ կոռուպցիոն հանցագործությունների, փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը: Դատելով իրավիճակից՝ Աննա Վարդապետյանը 1 տոննա հերոինի հարցը Վրաստանի դատախազի մոտ բարձրացրել է, քանի որ 1 տոննա թմրանյութը, ըստ ԱԱԾ-ի, Հայաստանում մրգերի ներմուծմամբ զբաղվող ընկերության կողմից Պանամայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության եւ Վրաստանի տարածքով է Հայաստանի Հանրապետություն ներմուծվել, որը հայտնաբերվել եւ գտնվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում: Իսկ թե ինչ է հայտնաբերվել, ինչպես է հերոինը հայտնվել ներմուծված բանանի մեջ, շարունակում է գաղտնի մնալ: Պետական կառույցները, նաեւ դատախազությունը ոչինչ չեն ասում:

Հայկ Մարությանը սիրված է՝ որպես դերասան, մերժված՝ որպես քաղաքական գործիչ. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ աշնանը սպասվող ավագանու ընտրություններին ընդառաջ՝ նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը դիմել է «Հայ ազգային կոնգրես» կուսակցությանը, որպեսզի նրանց ցուցակով մասնակցի ընտրություններին, սակայն կտրուկ մերժում է ստացել: Մերժման պատճառը, ըստ մեր տեղեկությունների, եղել է այն, որ ՀԱԿ-ը մեղադրել է Հայկ Մարությանին, որ հեղափոխությունից հետո սեւերի եւ սպիտակների բաժանեց հասարակությանը, խորը պառակտում մտցրեց հայ հանրության ներսում: Այս հարցով «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արման Մուսինյանին, որը, սակայն, կարճ արձագանքեց. «Նման բան չկա. Հայկ Մարությանը մեզ չի դիմել»: Ի դեպ, որոշ ժամանակ առաջ էլ մամուլում լուր տարածվեց, որ Հայկ Մարությանը գնացել է Ստեփան Դեմիրճյանի մոտ ու խնդրել, որ Երեւանի ավագանու գալիք ընտրություններին մասնակցի վերջինիս գլխավորած ՀԺԿ ցուցակով, սակայն կրկին մերժում է ստացել: Ստացվում է՝ Հայկ Մարությանին չորսբոլորը մերժում են, բայց նրա ներկայացումները գնում են դիտելու:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Է

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի հետ:

-Տիկին Թովմասյան, Դուք մասնակցեցիք Հայաստանի Ժողովրդավարության ֆորումին, որտեղ միակ ընդդիմադիր պատգամավորն էիք, սակայն անցած տարի չեք մասնակցել նույն ֆորումին: Ինչպե՞ս ստացվեց, որ այս տարի մասնակցեցիք:

-Նախ շնորհակալ եմ հրավերի համար: Ուզում եմ տեղեկացնել, որ, այո՛, անցած տարի չեմ մասնակցել մի պարզ պատճառաբանությամբ. անցած տարի ինձ հրավիրել էին պարզապես մասնակից, իսկ այս անգամ ես հնարավորություն ունեի մասնակցել քննարկմանն ու ներկայացնել այլընտրանքային տեսակետ Հայաստանի ժողովրդավարության մասին, դրա համար ես որոշեցի այս տարի մասնակցել եւ իմ խոսքը ասել, ոչ թե լինել մասնակից:

-Որպես ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ ի՞նչ եք կարծում, Հայաստանը ժողովրդավա՞ր պետություն է:

-Ժողովրդավարությունը շարունակական գործընթաց է: Այնպես չի, որ մի քննություն հանձնես ու ասես, որ, վերջ, այսօրվանից մենք ժողովրդավար հանրապետություն ենք: Ժողովրդավարությունը անընդհատ փայփայվող եւ շարունակ ապացուցվող գործընթաց է: Հայաստանի իշխանությունները, հասարակությունը եւ, առհասարակ, Հայաստանը հավաքական իմաստով անընդհատ պիտի ապացուցի, որ ինքը ժողովրդավար երկիր է: Ես ֆորումին ներկայացրի մի շարք սպառնալիքներ, որոնց առջեւ կանգնած է Հայաստանի Հանրապետությունը: Պետք է ասեմ, որ այն բոլոր պատկերացումներին, որ Հայաստանն իսկապես ժողովրդավար երկիր է, ես տալիս եմ մեկ ընդհանուր վերնագիր՝ «Հայաստանում առկա է հայկական ժողովրդավարություն»

-Ձեր պլանային քննարկման ժամանակ նշեցիք, որ Հայաստանի ժողովրդավարության դեմ մի շարք ներքին սպառնալիքներ կան: Նիկոլ Փաշինյանը դրանից առաջ նույն սրահում հայտարարել էր, որ Հայաստանի ժողովրդավարությանը ներքին սպառնալիքներ չկան, միայն արտաքին են: Այս մասով ի՞նչ կասեք:

-Ես ամենեւին համաձայն չեմ Նիկոլ Փաշինյանի դիրքորոշման հետ: Ո՛չ, հենց Հայաստանի իշխանությունները, հենց Նիկոլ Փաշինյանը եւ իր թիմակիցները ժողովրդավարության ներքին սպառնալիքներից են, որովհետեւ նրանք այնպիսի քայլեր են անում, որոնք ուղղակի հակասում են ժողովրդավարության նորմերին, եւ ես նաեւ բացատրեցի՝ ինչպե՞ս կարող է ժողովրդավար երկրում մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը մեր հանձնաժողովում անցնի այդպիսի պատմական խայտառակ պայմաններում, երբ ընդդիմադիր թեկնածուին իշխանական խմբակցության քարտուղարը սպառնաց կտրել ականջներն ու լեզուն: Ես դրանից հետո ուղարկեցի գրություն գլխավոր դատախազին, սակայն մինչ այս պահը որեւէ առաջընթաց, որեւէ քայլ չի իրականացվել: Ընդհակառակը՝ դատախազը մերժեց իմ դիմումը՝ ասելով, որ հանցակազմ չկա: Այսինքն՝ սպառնալիքը, որը հնչեցվել է ուղիղ եթերում, չի համարվում սպառնալիք Հայաստանի իրավապահ համակարգի համար:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՍՊՈՐՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մայիսի 31-ին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն այցելել է ԱՀ գերագույն դատարան եւ հանդիպել դատավորների եւ դատական համակարգի ծառայողների հետ:

Նախագահը խոսել է ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի, առկա պայմաններում իրավապահներից եւ դատական համակարգից ունեցած ակնկալիքների մասին:

Դատական համակարգի ներկայացուցիչների հետ հանդիպումը հերթականն էր մայիսի 23-ից մեկնարկած հանդիպումների շարքում, որոնք նպատակ ունեն հանրության տարբեր խմբերի տեղեկացնելու առկա մարտահրավերների մասին եւ քննարկելու իշխանությունների ու հասարակության անելիքները:

Այս ընթացքում նախագահ Հարությունյանը հանդիպումներ է ունեցել լրագրողական համայնքի, Ստեփանակերտի կրթօջախների տնօրինության, սպորտի ոլորտի ներկայացուցիչների եւ շրջանների ու համայնքների ղեկավար կազմերի հետ:

Դրանց ընթացքում նախագահ Հարությունյանը մեկնաբանել է մայիսի 23-ի ուղերձի դրույթները եւ ձեւակերպել հիմնական անելիքները տվյալ ոլորտներում:

Արայիկ Հարությունյանը շարունակում է հանդիպումների շարքը:

ԴԵՍՊԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը ընդունել է Հայաստանում Արգենտինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիանո Վերգարային:

Նախագահի աշխատակազմի տարածած հաղորդագրության համաձայն՝ Վահագն Խաչատուրյանը շնորհավորել է Արգենտինայի ազգային տոնի՝ հեղափոխության օրվա կապակցությամբ, որը նշվում է մայիսի 25-ին:

«Շնորհավորում եմ Ձեզ ազգային տոնի կապակցությամբ եւ, ի դեմս Ձեզ, հողում իմ լավագույն բարեմաղթանքներն Արգենտինայի ժողովրդին, Արգենտինայի նախագահին»:

Դեսպան Մարիանո Վերգարան իր հերթին նշել է. «Շնորհակալություն, հարգելի՛ պարոն նախագահ, այս ընդունելության համար: Մեզ համար շատ կարեւոր եւ գնահատելի է Ձեր մոտեցումը, Ձեր պատրաստակամությունը մեզ հյուրընկալելու եւ աջակցելու: Շնորհակալություն եւս մեկ անգամ ընդունելության եւ լավ խոսքերի համար»:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-արգենտինական բարեկամական սերտ հարաբերությունների հետագա խորացմանն ուղղված մի շարք հարցեր: Մտքեր են փոխանակվել միջազգային հարթակներում երկու երկրների սերտ համագործակցության վերաբերյալ:

Զրույցի ընթացքում նախագահ Վահագն Խաչատուրյանը մանրամասներ է ներկայացրել տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ, ինչի կապակցությամբ դեսպան Վերգարան ընդգծել է Արգենտինայի պատրաստակամությունը լիարժեքորեն աջակցել հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման եւ կայուն ու հարատեւ խաղաղության հասնելուն ուղղված Հայաստանի դիրքորոշմանը:

Հանդիպմանը երկուստեք կարեւորվել են խորհրդարանական դիվանագիտության ու բարձր մակարդակի քաղաքական երկխոսության խթանմանն ուղղված նախաձեռնությունները:

ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԴՐԴԵԼ ԵՆ ՀԱՆՑԱՆՔԻ

Պարզվում է՝ Դավիթաշենի վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի տեղակալ Կորյուն Մխիթարյանի վրա կրակել են ոչ թե անձնական խնդիրների պատճառով, այլ քանի որ նա Ռոման Համբարձումյանի տեղակալն է եւ քաղաքացիների հետ հարաբերվել է փողոցային կանոններով:

Հիշեցնենք, որ, համաձայն պաշտոնական՝ ՀՀ քննչական կոմիտեի հայտնած տեղեկության, դեպքին մոտ 2-3 ամիս առաջ նախորդել է հողակտորի հարցի շուրջ 41-ամյա տղամարդու եւ մի 30-ամյա տղամարդու միջեւ սուր վիճաբանություն:

Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ քաղաքացին հողակտոր է ունեցել, որի վրա շինարարություն է կատարել, եւ թաղապետ Ռոման Համբարձումյանի տեղակալ Մխիթարյանը (չի բացառվում՝ հենց Ռոմանի հանձնարարությամբ) անընդհատ միջամտել է, խոչընդոտել քաղաքացուն: Փոխանակ օրենքը կիրառի, վարչարարությամբ արգելի ապօրինությունը, թաղապետի տեղակալը խոսակցությունը տեղափոխել է փողոցային դաշտ, այդ բառապաշարով կամ, ինչպես ասում են, «գողական բարքերով» փորձել է հարցին լուծում տալ, թե, իբր, կատարվող շինարարությունը ապօրինի է, ու մինչեւ թույլ չտա փոխթաղապետը, քաղաքացին չի կարող շարժվել սեփական հողի վրա: Եւ, ահա, այս պատմությանը հաջորդել են կրակոցները: Պաշտոնապես հայտնի դարձավ, որ 2023 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, Բաշինջաղյան փողոց եւ Բաշինջաղյան փակուղի խաչմերուկում հիշյալ 30-ամյա տղամարդը, 36-ամյա տղամարդու եւ մի խումբ անձանց հետ դարանակալելով «Վոլսկվագեն տուարեգ» մակնիշի ավտոմեքենային, որի ղեկին եղել է թաղապետի տեղակալ Կորյուն Մխիթարյանը, իրենց մոտ գտնվող մահակներով վնասել են հիշյալ ավտոմեքենան, իսկ 30-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրազենով կրակել է ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով թաղապետի տեղակալի թիկունքային հատվածում պատճառվել է մարմնական վնասվածք:

Այսինքն՝ թաղապետի տեղակալը այնպիսի վիճակի է հասցրել քաղաքացուն, որ սեփական ձեռքերով են փորձել հաշվեհարդար տեսնել նրա հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը կհետեւի այս պատմությանը՝ վեր հանելու, թե թաղապետ Ռոման Բաղդասարյանն ինչ առնչություն ունի օրենքից դուրս գործող իր տեղակալի կրիմինալ պատմության հետ:

ՔՊ–Ի ՓԱԿ ՆԻՍՏԸ

Ինչպես հայտնել էինք, նախօրեին ՔՊ կուսակցությունը վարչության նիստ է արել՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել փակ նիստից: Այսպիսով, տեղեկացանք, որ նիստին հիմնականում քննարկվել են անվտանգային հարցեր, Ադրբեջանի հետ տարվող բանակցային գործընթացի հետ կապված հարցեր: Փաշինյանը ներկայացրել է թիմակիցներին՝ ինչ փուլում են այս պահին բանակցությունները, այնուհետեւ վարչության անդամներն են հարցեր ուղղել նրան: Նիստի վերջում արդեն քննարկվել են քաղաքական եւ ներկուսակցական հարցեր: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ կուսակցության վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանից հետաքրքրվեց՝ քննարկվել են արդյոք Քիշնեւում սպասվող հանդիպումը կամ Ալեւի վերջին սպառնալից հայտարարությունները՝ ուղղված Արցախին: Վերջինս ասաց. «Ոչ, քննարկվել են միայն այն հարցերը, որոնք ռելիզում է նշված»:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Փաշինյանն ու կինը՝ Մոլդովայում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ մայիսի 31-ից հունիսի 2-ն աշխատանքային այցով մեկնել է Մոլդովայի Հանրապետություն:

Վարչապետը Քիշնեւում կմասնակցի Եվրոպական քաղաքական համայնքի երկրորդ գագաթնաժողովին: Միջոցառման շրջանակում վարչապետը երկկողմ հանդիպումներ կունենա միջազգային գործընկերների հետ:

Քիշնեւում նախատեսված է նաեւ ՀՀ վարչապետի, Ֆրանսիայի նախագահի, Գերմանիայի կանցլերի, Եվրոպական խորհրդի նախագահի եւ Ադրբեջանի նախագահի ինգակողմ հանդիպումը:

ԴԱՏԱԽԱԶԸ՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՇՆԱՄՈՒ» ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի հրավերով, Վրաստանում է՝ մասնակցելու Վրաստանի դատախազության 105-ամյա հոբելյանին նվիրված միջոցառմանը:

Այցի շրջանակում Աննա Վարդապետյանը առանձնազրույց է ունեցել վրաց գործընկերոջ հետ եւ քննարկել համագործակցության զարգացմանն ուղղված մի շարք հարցեր:

Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն ողջունել է ՀՀ գլխավոր դատախազի այցը Վրաստան եւ ընդգծել, որ համագործակցությունը զարգացնելուն ուղղված մեծ ներուժ կա եղբայրական պետությունների դատախազությունների միջեւ:

Աննա Վարդապետյանը շնորհավորել է վրաց գործընկերոջը մասնագիտական տոնի կապակցությամբ եւ շնորհակալություն է հայտնել միջոցառմանը հրավիրելու համար:

Հայաստանի եւ Վրաստանի գլխավոր դատախազների հանդիպման ընթացքում, մասնավորապես, անդրադարձ է կատարվել քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությանը, եւ ընդգծվել է, որ երկու երկրների դատախազությունների միջեւ բարձր մակարդակի հարաբերությունները թույլ են տալիս աշխատանքային կարգով քննարկել ծագած հարցերը եւ գտնել առկա մարտահրավերների՝ երկուստեք ընդունելի լուծումներ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել 2022 թվականին երկու երկրների դատախազությունների միջեւ կնքված համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրին, եւ քննարկվել դրա շրջանակում աշխատանքային ծրագիր մշակելու եւ ստորագրելու հնարավորությունը: Նշված ծրագիրը կներառի այնպիսի արդիական ուղղություններ, ինչպիսիք են կիբեռ եւ կոռուպցիոն հանցագործությունների, փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը:

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդգծել է ընդհանուր «թշնամու»՝ հանցավորության դեմ պայքարում համագործակցված աշխատանքի եւ ուժերի կոնսոլիդացիայի անհրաժեշտությունը:

ՖՈՐՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՐԵՆԴ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ մասնակցել է Ժողովրդավարության հայկական ֆորումին: Միջոցառումն անցկացվում է երկրորդ անգամ՝ Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության եւ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության համատեղ ջանքերով:

Ժողովրդավարության հայկական ֆորումին ներկա են եղել հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, Կառավարության անդամներ, պատգամավորներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, քաղաքացիական հասարակության, փորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ:

Վարչապետ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում նշել է.

«Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ նախագահ,

Դիվանագիտական կորպուսի հարգելի՛ ներկայացուցիչներ,

Freedom House կազմակերպության հարգելի՛ նախագահ,

հարգելի՛ ներկաներ,

Ողջունում եմ «Ժողովրդավարության հայկական ֆորումի» անցկացումը արդեն երկրորդ տարին անընդմեջ եւ հույս ունեմ, որ այս միջոցառումը, այս կարեւոր իրադարձությունն իսկապես կշարունակվի ամեն տարի եւ կդառնա ամենամյա:

Ուզում եմ արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում համացանցն ազատ է, մամուլն ազատ է, ընտրություններն ազատ են: Բայց ես սա չեմ ուզում ընդգծել որպես նվաճում կամ ձեռքբերում, ես սա ուզում եմ ընդգծել որպես առօրեականություն, որը մեր բոլորի համատեղ աշխատանքի արդյունք է:

Երբ 2018 թվականին տեղի ունեցավ ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունը, եւ մենք ասում էինք, որ ժողովրդավարությունը Հայաստանի հիմնական բրենդն է, շատերը կասկածով էին վերաբերվում, որովհետեւ ասում էին, որ հետհեղափոխական էյֆորիայի պայմաններում կառավարությունն առանձնապես ազատություններ սահմանափակելու կարիք ու անհրաժեշտություն չունի էլ: Բայց այն փաստը, որ «Ժողովրդավարության հայկական ֆորումը» առաջին անգամ մեր երկրում տեղի ունեցավ 2022 թվականին եւ ոչ թե 2019 թվականին, կարծում եմ՝ բավական խոսուն փաստ է, որովհետեւ երբ մենք ընդգծում էինք 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ազատ լինելը, էլի դա որոշակիորեն դրվում էր հարցականի տակ՝ իսկ ինչպիսի՞ն կլինեն ընտրություններն այլ պայմաններում: Ցավոք, այդ «այլ պայմանները» եղան, եւ արձանագրեցինք, որ այդ «այլ պայմաններում» ընտրություններն ամենեւին էլ պակաս ազատ եւ ժողովրդավարական չեն, եւ դա միջազգային հանրության գնահատականն է, ինչը չի նշանակում, որ եւ՛ 2018 թվականին, եւ՛ 2019 թվականին ընտրությունները եղել են անթերի: Նկատի ունեմ, իհարկե, քաղաքական մթնոլորտը եւ քաղաքական կուլտուրան մի հարց է, որը դեռ պետք է հասցեագրվի:

Այս առումով, այո՛, պիտի ընդգծեմ, որ ժողովրդավարությունը Հայաստանի հիմնական բրենդն է, եւ սա մեր համոզմունքն է եւ մեր ռազմավարությունը: Դա ամենեւին էլ հանգամանքների բերումով տեղի ունեցած պատահականությունների արդյունք չէ: Սա գիտակցված քաղաքական կուրս է, որը Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ ժողովուրդը վարում են:

Այս իմաստով պիտի ընդգծեմ նաեւ, որ սրանից բխող շատ լուրջ ինստիտուցիոնալ բարեփոխումներ դեռ ընթացքի մեջ են, որոնք իրենց հետ պիտի բերեն մարդու իրավունքների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, օրենքի գերակայության ավելի բարձր մակարդակ, հակակոռուպցիոն քաղաքականության ավելի բարձր մակարդակ»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄՆ-Ն՝ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներն արդյունավետ հանդիպում է ակնկալում Քիշնեւում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի առաջիկա բանակցություններից. հայտարարել է Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Մեթյու Միլլերը:

«Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներն այս շաբաթավերջին Քիշնեւում կհանդիպեն մեր եվրոպացի գործընկերների հետ: Եվ մենք հուսով ենք, որ դա արդյունավետ քայլ կլինի՝ բանակցությունների սեղանի շուրջ, ոչ թե բռնության կիրառմամբ խնդիրները լուծելու ուղղությամբ»,- նշել է Միլլերը:

Ըստ նրա՝ «ագրեսիվ հռետորաբանությունը կարող է հանգեցնել միայն անցյալի բռնության շարունակության, իսկ կառուցողական երկխոսությունը՝ ինչպես հրապարակային, այնպես էլ փակ, կարող է ստեղծել խաղաղություն, հնարավորություններ եւ հույս», իսկ Միացյալ Նահանգները պատրաստ է աջակցել երկու կողմերի ջանքերին՝ կայուն եւ արժանապատիվ խաղաղության համաձայնագիր կնքելու համար:

Հիշեցնենք՝ հունիսի մեկին Քիշնեւում նախատեսված է Իլհամ Ալիեւի ու Նիկոլ Փաշինյանի հանդիպումը, որին մասնակցելու են Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելը, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցն ու Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը:

ԺԱՄԱՆԱԿ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

ՀՀ կառավարության կողմից ավելի վաղ ներկայացված դիմումի հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրել է որոշում ու պահանջել Ադրբեջանից մինչեւ սույն թվականի հունիսի 6-ը ներառյալ տրամադրել տեղեկություն՝ արդյոք 2 զինծառայողները գերու կամ այլ կարգավիճակում գտնվում եմ Ադրբեջանի տիրապետության տակ. եթե այո, Դատարանը Ադրբեջանից պահանջել է տրամադրել տեղեկություն զինծառայողների պահման պայմանների եւ բժշկական հետազոտությունների մասին:

Այս մասին հայտնում են Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակից:

Հիշեցնենք, որ մայիսի 28-ին Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակը Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել Ադրբեջանի իրավասության ներքո գտնվող ՀՀ ՋՈՒ երկու զինծառայողների հիմնարար իրավունքների պաշտպանության վերաբերյալ դիմում եւ պահանջել, որպեսզի, Դատարանի կանոնագրքի 39-րդ կանոնի համաձայն, միջանկյալ միջոց կիրառվի Ադրբեջանի նկատմամբ՝ զերծ մնալու հայ զինծառայողների իրավունքների խախտումներից: Միաժամանակ պահանջ է ներկայացվել՝ տրամադրելու տեղեկատվություն վերջիններիս պահման վայրի, պայմանների եւ առողջական վիճակի վերաբերյալ:

ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ՎԱՐՉԱՊԵՏՆ ՈՒ ՀՂԻ ԿՆՈՋ ՄԱՀԸ

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն նոր քրեական գործ է հարուցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված եւ մահացած հղի կնոջ՝ Սոնա Մնացականյանի դեպքով:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս քրեական գործով իրավապահների տեսադաշտում է Պետական պահպանության ծառայության պետ Սարգիս Հովհաննիսյանի տեղակալ Գրիգոր Առաքելյանը:

Ինչպես հայտնի է, 2023 թվականի մարտի 3-ին փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը հայտնել էր, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ ՀՀ լավագույն դատավորներից Արշակ Վարդանյանի նախագահությամբ, բավարարել է ներկայացված հատուկ վերանայման բողոքը եւ արձանագրել է, որ ՀՀ վարչապետին ուղեկցող շարասյան ավտոմեքենայի վարորդի կողմից Սոնա Մնացականյանին վրաերթի ենթարկելու դեպքով մինչդատական վարույթի ընթացքում խախտվել են տուժողի իրավահաջորդ Մնացական Մնացականյանի իրավունքները եւ իրավաչափ շահերը՝ շարասյան ղեկավար եւ պատասխանատու կազմի պաշտոնատար անձանց արարքների քրեաիրավական գնահատման կապակցությամբ պատշաճ քննություն չկատարելու իմաստով: Այս դեպքով իրականացվել է ուղղորդված նախաքննություն, բացահայտ նպատակներով «անհետացվել» է շարասյան ավտոմեքենաներում օգտագործված ռադիոկապի ձայնագրությունը:



Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 359-րդ, 362-363-րդ և 393-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ՝

Տուժողի իրավահաջորդ (տուժող) Մնացական Մնացականյանի ներկայացուցիչ Ռաֆֆի Ասլանյանի ներկայացրած հատուկ վերանայման բողոքը բավարարել մասնակիորեն, թիվ ԵԴ/0843/11/22 գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումն ամբողջությամբ բեկանել:

Վարույթի հանրային մասնակիցներին պարտավորեցնել սույն որոշմամբ արձանագրված վարութային ակտերի կայացմամբ (կատարմամբ) վերացնել Տուժողի իրավահաջորդ (տուժող) Մնացական Մնացականյանի իրավունքների և իրավաչափ շահերի խախտումը:

Սույն որոշումն ուժի մեջ հանվում է կայացման օրը և ստանալու պահից 15-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.Ժ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նաեւ չեմ բացառում, որ իշխանությունը փորձելու է ՀՀ վճռաբեկ դատարանի միջոցով բեկանել այս դատական ակտը եւ, ի վերջո, փակել իր համար խոցելի թեման: Ու մինչ իրավապահները այս ողբերգական դեպքով խառնվել են իրար ու նոր քրեական գործ են հարուցել, մայիսի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ զրույցում անդրադարձել էր հետեւյալ հարցին. իր որդու առեւանգման գործով զոհ չկա, սակայն մարդ են կալանավորում, մինչդեռ իր ավտոշարասյան արարքի հետեւանքով զոհ կա, ու որեւէ մեկը կալանավորված չէ: Փաշինյանը վստահեցրեց, թե տեղյակ չէ գործի ընթացքից, բայց որեւէ պատճառ չի տեսնում, որ այդ գործի ընթացքն օբյեկտիվորեն տեղի չունենա:

ՈՒՄ ՀԱՄԱՐ

ՑՈՒՑՄՈՒՆՔ՝ ՀԵՐՈՒՆԻ ԳՈՐԾՈՎ

Ի՞նչ են ԱԱԾ-ում պատմել 1 տոննա հերոնի գործով կալանավորված՝ ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի ընկերության տնօրենն ու պահեստապետը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նրանք ներկայացրել են այն, ինչը Միհրան Պողոսյանը ցուցադրել է տեսանյութում: Մասնավորապես, ընկերության պահեստապետ Սամվել Գալստյանը հայտնել է, որ բանվորը տարօրինակ բան է նկատել արկղերում, ու այդ մասին տեղյակ են պահել իրեն, ինքը 15 րոպե անց մոտեցել է արկղերին եւ տեսել է տարօրինակ զանգվածը: Առանձնացրել է մեկ արկղը ու նկարել է իր բջջային հեռախոսով: Կրկին բացել է նոր արկղ ու նկարել է իր հեռախոսով տարօրինակ զանգվածը: Այդ ամենից հետո հրահանգել է աշխատակիցներին շարունակել աշխատանքը, իսկ տարօրինակ զանգվածի մասին տեղյակ է պահել ղեկավարներին. այլ բանից տեղյակ չէ:

Ընկերության տնօրեն Լեւոն Աթաջանյանն էլ ցուցմունք է տվել, որ աշխատակիցները նկատել են տարօրինակ զանգված արկղերում, որի մասին տեղյակ են պահել իրեն, եւ այլ բան չգիտի:

Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ Մ.Պ-ի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում է կայացրել: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը. Մ.Պ-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Հավելենք, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալներով՝ «Մրգենի» ՍՊԸ-ն հիմնադրվել է թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականի հուլիսի 27-ին: Ընկերության տնօրենը Ռուսաստանի քաղաքացի Լեւոն Աթաջանյանն է:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱԼՆ ՈՒ ԿՐԱԿՈՑՆԵՐԸ

Մայիսի 20-ին կրակոցներ էին հնչել Երեւանում: Ժամը 9:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ Բաշինջաղյան 166 տան դիմաց կրակոցներ են հնչել:

Դեպքի վայրից 1 հոգի հրազենային վնասվածքներով տեղափոխվել էր «Արմենիա» բժշկական կենտրոն:

Վիրավորը Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Կորյուն Մխիթարյանն է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, որ իրավապահներին է ինքնակամ ներկայացել մեկ քաղաքացի եւ հայտնել, որ ինքն է կրակել Դավիթաշենի թաղապետի տեղակալի վրա: Այս պահին իրավապահները նրա մասով գործողություններ են իրականացնում՝ հասկանալու համար, թե արդյոք ներկայացած քաղաքացին է կրակել թաղապետի տեղակալի վրա եւ փախուստի դիմել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Դավիթաշենի թաղապետի տեղակալի վրա կրակելու պատճառը եղել է այն, որ երկու մեքենայի վարորդներ չեն զիջել ճանապարհը միմյանց, ինչից հետո սկսվել է լեզվակռիվ, եւ արտասահմանյան ամենագնաց մեքենայից կրակոցներ են արձակել Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Կորյուն Մխիթարյանի ուղղությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Դավիթաշենի թաղապետի տեղակալին կրակելու դեպքով մեկ անձ կալանավորվեց:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՎԱՆԱՁՈՐԻ ԲԱՆՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Դավիթ Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի հուլիսի 27-ին՝ 2 անգամ, հուլիսի 28-ին, օգոստոսի 5-ին ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի իր պահման թիվ 26-րդ խցում պատրաստել, պահել եւ կրել է առողջությանը վնաս պատճառելու համար այլ գործիք հանդիսացող ածելու սայր, որով կատարել է կտրվածքների տեսքով ինքնավնասում, որոնք պատճառել են առողջության թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով, այնուհետեւ ինքնավնասման առարկա հանդիսացած սայրերը ներկայացրել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներին: Գործը մտել է դատարան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 30-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 50 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ՝ ՏԱՎՈՒՇԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Տավուշի մարզից սոցիալապես անապահով ընտանիքների ծնողները ինձ դժգոհել են, որ դպրոցական «Վերջին զանգի» կապակցությամբ հանրակրթական դպրոցներում մեծ չափերով դրամահավաքություն է եղել: Այդ փողահավաքությունը կատարվում է դպրոցների ծնողական կոմիտեների նախաձեռնությամբ, սակայն ծնողական կոմիտեները դպրոցների տնօրենությունների հետ այդ գործում ներդաշնակ են գործում: Ծնողների վկայությամբ՝ որոշ դպրոցներում ավարտական դասարանի դասղեկին ծրարով փող է տրվում: Սոցիալապես անապահով ծնողները դժգոհում են, որ «Վերջին զանգի» կապակցությամբ իրենց զավակների համար գնված շորերի փողին գումարվում են ավարտական ճոխ քեֆի, դպրոցի տնօրենի, դասարանի դասղեկի համար գնված նվերների, տեսանկարահանման, լուսանկարահանման եւ այլ ծախսերի գումարները: Ոչ ավարտական դասարանների աշակերտների անապահով ծնողներն էլ դժգոհում են աշակերտների տարեվերջյան էքսկուրսիաների թանկ գներից: Ամեն տարի մարտի 8-ի, ապրիլի 7-ի, սեպտեմբերի 1-ի, Ուսուցչի օրվա կապակցությամբ ծնողներից հազարական դրամ են հավաքում դասղեկի համար ծաղիկ գնելու նպատակով, 30 ծնողից հավաքված 30 հազար դրամով ինչքան ծաղիկ են գնում. դժգոհում են ծնողները: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ? ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին մայիսի 22-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե դպրոցական «Վերջին զանգի» կապակցությամբ մարզի դպրոցների շրջանավարտները միջինը ինչքան ծախս են կատարել: Մարզպետ Հայկ Ղալումյանը, խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, մինչ օրս չի պատասխանել հարցապնդմանս:

ԹՄՐԱՆՅՈՒԹ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում 2022թ. մայիսի 24-ից ընթանում է պայմանագրային զինծառայողներ Աշոտ Օհանյանի, Արմեն Մեսրոպյանի, Հովհաննես Դարբինյանի, Վարդգես Նիկողոսյանի դատավարությունը: Նրանց մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պայմանագրային զինծառայողներ, 2021 թվականի մարտի 18-ից մարտի 23-ն ընկած ժամանակահատվածում մարտական դիրքում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում խմբով ծխելու եղանակով գործածել են կաննաբինոիդների խմբին պատկանող թմրալկալոիդներ պարունակող թմրամիջոց: Նրանց բոլորին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364.2 հոդվածի 2-րդ մասով: Սույն քրեական գործով առաջադրված մեղադրանքը պաշտպանում է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը: Աշոտ Օհանյանի, Արմեն Մեսրոպյանի, Հովհաննես Դարբինյանի, Վարդգես Նիկողոսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ՈՐՔԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԿՍՏԱՆԱՆ

Կառավարության վաղվա նիստի օրակարգում ընդգրկված հարցերից մեկը «Պաշտոնաթող վարչապետի գրասենյակի գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» հարցն է: Ընդ որում՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս նախագիծը ընդգրկված է չզեկուցվողների թվում:

Բանն այն է, որ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» ՀՕ-1-Ն օրենքում 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՕ-619-Ն օրենքով կատարվել են փոփոխություններ, եւ լրացվել է «Վարչապետի սպասարկումը պաշտոնաթողությունից հետո» 7.10-րդ հոդված, որի համաձայն՝ նախատեսվել է պաշտոնաթող վարչապետի գրասենյակի ինստիտուտը: Համաձայն կատարված փոփոխության՝ պաշտոնաթող վարչապետի գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) գործունեության ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանած կարգով: Միեւնույն ժամանակ, նույն օրենքի անցումային դրույթներով սահմանվել է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետ՝ օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար: Նշված հոդվածով ամրագրված նորմերի կատարումն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել մշակել եւ ընդունել անհրաժեշտ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Այսպիսով, նախագծով առաջարկվում է սահմանել պաշտոնաթող վարչապետի գրասենյակի գործունեության ֆինանսավորման կարգը, ըստ որի՝ նախատեսվել են Գրասենյակի գործունեության իրականացման համար երկու հիմնական ուղղություններ (գրասենյակի աշխատողների աշխատանքի վարձատրություն եւ գրասենյակի ընթացիկ գործունեության հետ կապված ծառայությունների եւ ապրանքների ձեռք բերում, սահմանվել է Գրասենյակի աշխատողների հիմնական աշխատավարձի չափը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշման N 5 հավելվածի, սահմանվել է Գրասենյակի կողմից վարձակալվող տարածքի տարեկան վարձավճարի փոխհատուցման առավելագույն չափը (2 մլն դրամ): Նախագիծը ընդունվելու դեպքում նախնական հաշվարկով պետական բյուջեի ծախսերի ավելացումը տարեկան կտրվածքով կազմում է՝ աշխատավարձի մոտավոր հաշվարկը՝14,8 մլն դրամ. 83.200 (Բազային աշխատավարձ) * 6.1 (գործակից) * 12 (ամիս) =6.090.240 83.200 (Բազային աշխատավարձ) * 4.9 (գործակից) *12 (ամիս) = 4.892.160 83.200 (Բազային աշխատավարձ) * 3.3 (գործակից) *12 (ամիս) = 3.294.720: Գրասենյակի կողմից վարձակալվող տարածքի տարեկան վարձավճարի փոխհատուցման առավելագույնը չափը՝ 2 մլն դրամ. ընդամենը՝ 13,8 մլն + 2 մլն = 15,8մլն դրամ:

Հավելենք, որ «Պաշտոնաթող վարչապետի գրասենյակի գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Ն.Հ.

ՈՐՈՇՈՒՄ

«ՊԼՅՈՆԿԱՆԵՐ» ՉՀԱՆՈՂՆԵՐԸ ՉԵՆ ՏՈՒԳԱՆՎԻ

Երեկ, Աժ պատգամավորության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները հանդիպեցին ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պատկան պաշտոնյաների հետ՝ քննարկելու համար ավտոմեքենաների ապակիների թաղանթապատման եւ լուսաթափանցելիության հետ կապված հարցերը:



Հանդիպման ընթացքում կարեւորվեց ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման ոլորտի նկատմամբ պատշաճ վերահսկողության շարունակական բարելավման անհրաժեշտությունը:

Նախարարը ներկայացրեց առկա իրավակարգավորումներն ու փաստացի իրավիճակը:

Հաշվի առնելով թաղանթապատված ապակիներով մեքենաների քանակը, խախտումը վերացնելու համար նախատեսված ժամանակի սղությունը, ինչպես նաեւ իրավակիրառ պրակտիկան կտրուկ փոփոխելու ոչ նպատակահարմար լինելու հանգամանքը՝ պատգամավորների կողմից ներկայացվեց առաջարկ՝ ցանկալի արդյունքին հասնել հնարավորինս նվազ վարչական ներգործության միջոցներով:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ մայիսի 29-ին գրել էր, որ հայրենի իշխանությունները մտափոխվել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ներքին քննարկումներ են ունեցել հայրենի իշխանության ներկայացուցիչները ու որոշել են զիջումների գնալ, վարորդներին վարչական պատասխանատվության չենթարկել, կարճ ասած՝ հանդուրժել այն վարորդներին, որոնք չեն կատարելու պահանջները: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ սա արվում է նաեւ հայրենի իշխանության համար, քանի որ վերջիններս չեն էլ պատրաստվում «պլյոնկա» պոկել:

Հիշեցնենք, որ ներպետական օրենսդրության իրավադրույթների եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի համաձայն՝ մեքենաների առջեւի կողային ապակիների լուսաթափանցելիությունը պետք է կազմի առնվազն 70%:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2023 թ. հունիսի 29-ին, ժամը 12:00-ին <<Տաթվան>> ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 սենյակ հասցեում կանցկացվի <<Տաթվան>> ՍՊ ընկերության պատկանող գույքերի աճուրդ վաճառքը

ԼՈՏ 1. ԳԱԶ 322132-220 մակնիշի 558 LS 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 95,967 ՀՀ դրամ:

ԼՈՏ 2. ԳԱԶ 322132 մակնիշի 455 OC 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 33,351 ՀՀ դրամ:

ԼՈՏ 3. ԳԱԶ 322132-220 մակնիշի 332 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 71,647 ՀՀ դրամ:

ԼՈՏ 4. ԳԱԶ 32213 մակնիշի 775 AD 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 70,000 ՀՀ դրամ:

ԼՈՏ 5. ԳԱԶ 322132 մակնիշի 843 LS 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 41,690 ՀՀ դրամ:

ԼՈՏ 6. ԳԱԶ 322132 մակնիշի 331 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 63,370 ՀՀ դրամ:

ԼՈՏ 7.ԳԱԶ 322132-220 մակնիշի 213 LV 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 11,671 ՀՀ դրամ:

ԼՈՏ 8. ԳԱԶ 322132-220 մակնիշի 333 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 107,534 ՀՀ դրամ:

ԼՈՏ 9. ԳԱԶ 32213 մակնիշի, 332 OT 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 106,755 ՀՀ դրամ:

ԼՈՏ 10. ԳԱԶ 322132-220 մակնիշի , 288 LD 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 33,041 ՀՀ դրամ:

ԼՈՏ 11. ԳԱԶ 322132-220 մակնիշի 215 LV 61 պետական համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 27,957 ՀՀ դրամ:

ԼՈՏ 12. ԳԱԶ 32213- մակնիշի, 340 AG 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):

Մեկնարկային գինը կազմում է 96,445 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով <<Տաթվան>> ՍՊԸ սնանկության հատուկ հաշվին՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ-ի <<Նոր Արեշ>> մասնաճյուղ 1150014223993952 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայկական արտադրության MetaGait-ը, քայլքի իմիտացիա ստեղծելով, վերականգնում է հաշմանդամություն ունեցող անձանց շարժունակությունը:

Վերականգնողական սարքը վիրտուալ իրականության ակնոցով եւ հատուկ մշակված ծրագրով բուժառուին տեղափոխում է տարբեր միջավայրեր, որտեղ նրանք քայլում են:

MetaGait-ի հեղինակը «Քայլտեք» ընկերությունն է, որը միավորում է մի խումբ մասնագետների՝ կինեզիստների, նյարդաբանների, թերապեւտների, ինժեներների, որոնք հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար ստեղծում են նորարար սարքեր:

MetaGait սարքը ընկերության նախորդ արտադրանքի՝ «Քայլաբերի» կատարելագործված տեսակն է: «Քայլտեք» ընկերությունը «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի ամենամյա դրամաշնորհային ծրագրի հաղթողներից է: MetaGait-ի սարքերից մեկը հիմնադրամի աջակցությամբ ձեռք է բերվել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի լաբորատորիայի համար, որտեղ կատարվելու են գիտական հետազոտություններ:

«Ծրագիրն առնչվում է ոչ միայն առողջապահական, այլ նաեւ գիտակրթական ոլորտին: Այստեղ դասախոսական կազմի եւ ուսանողների կողմից MetaGait սարքն օգտագործվում է որպես փորձարարական գիտահետազոտական սարք, որի միջոցով պետք է մշակեն մեթոդաբանություն, որն էլ հետագայում հնարավորություն կտա ավելի էֆեկտիվ իրականացնել վերականգնողական թերապիաները»,- նշել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը:

«MetaGait-ը պատենտավորված է 157 երկրում եւ համարվում է նորարարություն: MetaGait-ի միջոցով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք, հայտնվելով տարբեր միջավայրերում, քայլում են, տեսնում իրենց քայլվածքը: Հիմա մենք գիտական ուսումնասիրություն ենք անում, հետազոտում ենք ուղեղի փոփոխությունները: Սովորաբար ուղեղի շարժողական կենտրոնները, ինֆորմացիա չստանալով, սկսում են ապաճել: Մենք տեսողականից ինֆորմացիա ենք ուղարկում ուղեղին: Ուսումնասիրության արդյունքում կտեսնենք՝ դրական ինչ տեղաշարժեր են լինում»,- նշում է «Քայլտեք» ընկերության հիմնադիր Դավիթ Արսենյանը:

Հեռավար վերականգնողական բուժման համար գործարկվել է նաեւ MetaGait-ի հավելվածը, որը ցույց է տալիս բուժառուների ցուցանիշները, վերականգնողական դինամիկան, որն էլ օգնում է ավելի արդյունավետ կազմակերպել մեթոդաբանությունն ու բուժման գործընթացը:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է «Ակբա» բանկի, ֆրանսիական «Կրեդիտ ագրիկոլ», «Կրեդիտ ագրիկոլ ազգային ֆեդերացիա»-ի եւ Գիշյան ընտանիքի կողմից: Հիմնադրամի ծրագրերը ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը:

ՀԵՏԱՔՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԾԽԱԽՈՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ

ՀՀ առողջապահության նախարարության տարածած հաղորդագրության մեջ ընդգծվում է, որ ծխախոտը հանրային առողջության լուրջ սպառնալիքներից է: Ամեն տարի ավելի քան 8 միլիոն մարդ է մահանում ծխախոտի օգտագործման հետեւանքով: Նրանցից ավելի քան 7 միլիոնը ծխախոտ օգտագործողներ եւ նախկին օգտագործողներ են, իսկ ավելի քան 1,2 միլիոնը՝ չծխողներ, որոնք ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը:

2022 թվականին Հայաստանում իրականացված՝ առողջապահության համակարգի գործունեության ընտրանքային հետազոտությունների տվյալների համաձայն՝16 տարեկանից բարձր բնակչության 25.5%-ը ծխում է: Ծխողների գերակշիռ մասը տղամարդիկ են (տղամարդկանց 53.2%-ը, կանանց՝2%-ը):

Բնակչության առողջության վրա փակ տարածքում երկրորդային ծխի ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ, 2016 թ.-ի համեմատ, 2022 թ.-ին այն նվազել է 53.1%-ից մինչեւ 47.0%:

Ծխախոտով պայմանավորված հիվանդություններից Հայաստանում ամեն տարի մահանում է ավելի քան 5500 բնակիչ: Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների բոլոր տեսակները վնասակար են առողջության համար, չկա դրանց անվնաս չափաբաժին:

2020 թվականի փետրվարի 13-ին ընդունվել է «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքը, որով նախատեսված սահմանափակումները տարածվում են ծխախոտային բոլոր արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների վրա:

Օրենքի համաձայն՝ արգելվում են ծխախոտի օգտագործումը բոլոր փակ եւ որոշ բաց հանրային վայրերում (այդ թվում՝ առողջապահական, կրթական, մշակույթի հաստատություններում, հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, փակ եւ բաց սննդի օբյեկտներում), գովազդի, իրացման (վաճառքի) խթանման եւ հովանավորության բոլոր ձեւերը. գործում են նաեւ այլ դրույթներ: Օրենքը միտված է ներկա եւ ապագա սերունդներին պաշտպանելու առողջության վրա ծխախոտային արտադրատեսակների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցությունից, ինչպես նաեւ բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, դրանց փոխարինիչների օգտագործումը որպես անառողջ եւ մերժելի վարքագիծ արմատավորելը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊՐԵՄԻԵՐԱ

«ՕԹԹԿ»-Ն ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԱՄՆ-ՈՒՄ

Ռեժիսոր Սերժ Գաբյանի «ՕԹԹԿ» (Օքը, Թոքը, Թվանքի կոքը) կատակերգական ֆիլմը կներկայացվի Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ֆիլմի պրեմիերան տեղի կունենա հունիսի 22-ին՝ ժամը 20:00-ին, Կալիֆորնիայի Փասադենա քաղաքի «Մանուկյան» արվեստի կենտրոնում (AGBU Manoukian Performance Art Center): Պրեմիերային ներկա կլինեն ֆիլմի ստեղծագործական կազմի անդամները:

«Անչափ ուրախ եմ, որ վերջապես մեր ֆիլմը հասնում է ամերիկաբնակ հայ հանրությանը: Մեզ համար չափազանց կարեւոր է ԱՄՆ-ում ֆիլմի ցուցադրությունները, որոնց արդյունքը ուղիղ անդրադառնում է Հայաստանում նոր ֆիլմերի արտադրության վրա: Ֆիլմը բացառիկ է իր տեսակով, ոճով եւ սցենարով եւ ոչ միայն որպես հայկական ֆիլմ: Այն արդեն հասցրել է հավաքել համակրողների մի մեծ բանակ: Ամենաշատն ինձ ուրախացնում է հայ երիտասարդների շնորհակալ արձագանքը, որ հայկական կինոարտադրությունում հնարավոր է աշխարհում մրցունակ ոճի եւ որակի ֆիլմ ստանալ, այն էլ՝ չունենալով մեծ ներդրողներ», - նշում է Սերժ Գաբյանը:

Հիշեցնենք, որ ֆիլմն այս տարի՝ ապրիլին, ներկայացվեց հայաստանյան հանդիսատեսին: Ֆիլմի հերոս սփյուռքահայ բիզնեսմենին շանտաժի է ենթարկում նախկին գործընկերը: Խնդիրը լուծելու համար բիզնեսմենը հրավիրում է մասնագետների ամբողջ աշխարհից: Միմյանց չհասկանալու եւ ոստիկանության հետ զուգահեռ ծավալվող ինտրիգների արդյունքում ստեղծվում է անկառավարելի մեծ խառնաշփոթ:

Ֆիլմում նկարահանվել են հանրահայտ դերասաններ Արսեն Գրիգորյանը, Ժիրայր Բաբազյանը, Արսինե Նավասարդյանը, Անդրանիկ Հակոբյանը եւ Արման Ղազարյանը. ֆիլմում նաեւ իր առաջին դերն է խաղացել ռեփեր Նարեկ A. Chilla -ն: Ֆիլմի համար օրիգինալ երաժշտությունը գրել է Սերժ Գաբյանը: Օգտագործվել են հանրահայտ երաժշտական գործեր՝ անակնկալ կատարումներով: Ֆիլմի նկարահանումները տեղի են ունեցել 2021 օգոստոսից մինչեւ 2022-ի մայիս Երեւանում: Ֆիլմը նախաձեռնող եւ իրականացնող «Հուլիգան ստուդիոս» կինոարտադրական կազմակերպության առաջին կինոնախագիծն է:

ՈՒՐ Է

ՌՈՏԵՆԲԵՐԳԻ ԽԱՆՈՒԹԸ ԲԱՑ Է

Ինչպես արդեն հայտնել էինք, Տիգրան Արզաքանցյանի կինը՝ Նատալյա Ռոտենբերգը, արդեն տեւական ժամանակ է՝ Երեւանի կենտրոնում՝ Մաշտոցի պողոտայում, իր անունը կրող բրենդային խանութը փակել է, սակայն «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսեց, որ «Մարիոթ» հյուրանոցում առկա խանութ-սրահի մասնաճյուղը բաց է իր հաճախորդների համար:

Հիշեցնենք, որ դեռեւս անցած տարի՝ հունիսին, Տիգրան Արզաքանցյանի կինը՝ Նատալյա Ռոտենբերգը, հայտարարեց, որ մտադիր է առաջադրվել Երեւանի ավագանու ընտրություններում «Ուժ հայրենյաց» կուսակցությունից: Արդեն հունիսի 9-ին հայտնի դարձավ, որ Ռոտենբերգի՝ Ուեսթմինսթերում գտնվող 8,73 մլն ֆունտ ստերլինգ արժողությամբ բնակարանը առգրավվել է այն բանից հետո, երբ նա չի վճարել հիփոթեքը: Այս մասին հայտնում էր Daily Mail-ը:

Դատավորը կարգադրել էր առգրավել շքեղ բնակարանը, որից տեսարան է բացվում դեպի Բուքինգհեմյան պալատը եւ թագավորական այգիները: Սա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ պարզ է դարձել, որ 40-ամյա Նատալյա Ռոտենբերգը «ընդհանրապես չի վճարել» գույքը գնելու համար տրամադրված վարկի համար: Ու երեւի սա է պատճառը, որ Ռոտենբերգը փակել է իր խանութը Հայաստանում, ու տեւական ժամանակ է՝ ինքն էլ է «անհետացել»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ՝ «ՍԹՈՐԻ»-ՈՒՄ

Ազգային երգերի կատարող Սեւակ Ամրոյանի կինը՝ Քրիստինան, վերջին շրջանում ակտիվ գործունեություն է սկսել ծավալել «Ինստագրամ»-ում: Երգչի կինը՝ Քրիստինան, «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում իր հետեւորդների համար կազմակերպել է հարց ու պատասխան եւ մեկնաբանել նրանց հուզող հարցերը:

Լ. Ե.

ՈՒԵՖԱ-Ի ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱԿ

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի «Պուշկաշ Արենա» ստադիոնում ֆուտբոլի Եվրոպայի լիգայի եզրափակիչում ՈՒԵՖԱ-ի պատվիրակ է նշանակվել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Արթուր Ազարյանը. հաղորդում է ՀՖՖ-ի կայքը:

Եվրոպայի լիգայի գավաթը կվիճարկեն իսպանական «Սեւիլիան» եւ իտալական «Ռոման»:

ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՎԵՊԸ՝ ԹՈՓՈՒՄ

Էրիկ Ավետիսյանի «Անիծված որդի»-ն Independent Book Publishing Professionals Group-ի կողմից ճանաչվել է տարվա լավագույն անկախ գրքերից մեկը: «Անիծված որդի»-ն դուրս է եկել Next Generation Indie Book Awards 2023-ի եզրափակիչ՝ անկախ հրատարակիչների ու ինքնահրատարակված հեղինակների համար նախատեսված աշխարհի ամենախոշոր մրցանակաբաշխության անսպասելի անվանակարգում: Հաղթողները եւ եզրափակիչ փուլի մասնակիցները կպարգեւատրվեն հունիսի 23-ին Չիկագոյի Նյուբերի գրադարանում կայանալիք գալա միջոցառման ժամանակ, որը համընկնում է Ամերիկյան գրադարանային ասոցիացիայի տարեկան համաժողովի հետ:

ՉԵՄՊԻՈՆԸ՝ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տոկիոյի օլիմպիական չեմպիոն, աշխարհի 12-րդ ռակետ Շվեյցարացի Բելինդա Բենչիչը մեկնաբանել է 20-ամյա ռուսաստանցի, ազգությամբ հայ, աշխարհի 134-րդ ռակետ Էլինա Ավանեսյանից կրած պարտությունը (3:6, 6:2, 4:6) թենիսի Ֆրանսիայի բաց առաջնության առաջին շրջանում:

«Չգիտեմ՝ ինչ ասել: Պայքարեցի, ինչպես կարող էի, բայց սա այն խաղամակարդակը չէ, որը ես պետք է ցուցադրեի: Հաղթելու հնարավորություն կար, այդ պատճառով այս պարտությունն ավելի ցավալի է: Ուրախ եմ, որ ոտքիս վնասվածքից հետո կարողացա դուրս գալ կորտ: Ոչ մի ցավ չզգացի: Կարծում եմ՝ մի քանի շաբաթ կպահանջվի նախկին մակարդակին վերադառնալու համար»,- Բենչիչի խոսքերը մեջբերել է մրցաշարի մամուլի ծառայությունը: Էլինա Ավանեսյանի հաջորդ մրցակիցը կլինի Ֆրանսիայի ներկայացուցիչ, աշխարհի 124-րդ ռակետ Լեոլյա Ժանժանը:

● Հունիսի 2-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ մարդու իրավունքների պաշտպանի հետ կապվել:

Գրիգոր Ստեփանյան (55 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Բողոքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները քաղաքացին անձամբ կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ուղարկել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացնել առցանց բողոք:

Բողոքի համար որեւէ հատուկ ձեւ սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բողոքում պետք է նշվեն նաեւ մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները: Եթե դիմողն ունի գործի պարզաբանման եւ լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ամուսնալուծվելու համար ի՞նչ փաստաթղթեր պիտի ներկայացվեն:

Իզաբելլա Արամյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ամուսինների միջեւ առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց ամուսնալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում:

Ամուսնալուծության գրանցման համար ամուսինները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Եթե ամուսիններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին՝ ամուսնալուծության մասին համատեղ դիմում տալու, ապա ամուսինների կամքի արտահայտությունը կարող է ձեւակերպվել ամուսնալուծության մասին առանձին հայտարարություններով: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացվում է անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական (առկայության դեպքում), ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմնում ամուսինների միջեւ փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար, ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով,

ամուսինների դիմումը եւ դատարանի՝օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության գրանցումը եւ ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնալուծության մասին ամուսինների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Ամուսնալուծության պետական գրանցման համար, ներառյալ վկայական տալը, գանձվում է պետական տուրք՝ 10000 ՀՀ դրամ: Ամուսնալուծության պետական գրանցման ժամանակ մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության դեպքում գանձվում է նաեւ 5000 ՀՀ դրամ պետական տուրք:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի կենտրոնը սպորտային է:

Մատենադարանի տարածքում՝ Կորյուն-Մաշտոց խաչմերուկի մոտ գտնվող բնակելի շենքերից մեկի պատշգամբում, յուրօրինակ լվացք է հայտնվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 5 + 8 +18 + 22
	Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +18 + 20
	Կոտայքի նախալեռներ	+13 + 16 +24 + 26
	Գեղարքունիք	+ 7 + 11 +18 + 21
	Լոռի	+11 + 16 +21 + 26
	Տավուշ	+13 + 18 +25 + 29
	Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 +18 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 + 23 + 28

	Արարատ	+15 + 17 +28 + 30
	Արմավիր	+13 + 16 +27 + 29
	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +17 + 20
	Վայոց ձորի նախալեռներ	+15 + 17 +25 + 28
	Սյունիքի հովիտներ	+17 + 21 +27 + 31
	Սյունիքի նախալեռներ	+10 + 15 +21 + 24
	Արցախ	+17 + 20 +26 + 29
	Երեւան	+ 14 + 16 + 26 + 28

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.5.2023**
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*